

ՀՅԴ-ն հանդես է գալիս կուսակցության ստանձնած պետական պաշտոններից հրաժարվելու պատրաստակամությամբ



26.02.2008 15:14

Երևան (Երկիր) - Այսօր Ազգային ժողովում հրավիրած մամլո ասուլիսի ժամանակ ՀՅԴ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննեսյանը եւ ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը մանրամասնեցին երեկ հրապարակված ԳՄ հայտարարությունը՝ փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների եւ դրանից հետո երկրում ստեղծված ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ:

Հայտարարության հիմնական կետերը հետեւյալն են՝ ընտրական գործընթացների գնահատման հետ կապված հարցերը, այս պահին Դաշնակցության կեցվածքը բնորոշող հաստատումները, այն քայլերը, որոնք անհրաժեշտ են ստեղծված իրավիճակից ելքեր փնտրելու, ինչպես նաեւ երկրում խորքային բարեփոխումներ իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է ընտրական գործընթացի վերլուծությանը, ապա, Ա. Ռուստամյանի խոսքերով, Դաշնակցությունը հիմնվել է բացառապես մարզերից, տեղամասերից ստացված սեփական տեղեկատվության վրա եւ չի օգտվել այլ աղբյուրներից

«Մենք, ըստ էության, չենք վիճարկել ընտրությունների արդյունքները, քանի որ հիմնական պատճառը այն ընտրական համակարգն է, որ ձեւավորվել է երկրում: Այն եւս մեկ անգամ ցույց տվեց, որ ունի երկու հիմնական բաց կողմեր. առաջինն այն է, որ ընտրական համակարգը չի ապահովում քվեատուփերում առկա ձայների հարաբերակցության համապատասխանեցումը ժողովրդի իրական համակրանքին: Եվ ընտրակեղծիքները վերահսկելը, նաեւ քվեների համապատասխանեցումը ընտրողների կամքին ապահովելը. այս մասով քաղաքական ուժերի եւ մեր հասարակության հնարավորությունները խիստ սահմանափակ են: Սա ամենամեծ բացն էմ համարում եւ մեր գնահատումների հիմնական մեխը», - ասաց Ա. Ռուստամյանը:

Նա նկատեց, որ այդ իրավիճակից դուրս գալու ճանապարհներից մեկն էլ ընտրամատյանների հասանելիությունը ապահովելն է, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի գնահատել ընտրակեղծիքների չափը:

Ըստ Ա. Ռուստամյանի՝ ՀՅԴ-ն ասել է, որ հավատարիմ է մնում 2007 թվականին ստորագրած համագործակցության համաձայնագրին եւ հանդես է գալիս կուսակցության ստանձնած պետական պաշտոններից հրաժարվելու պատրաստակամությամբ:

«Դիմում ենք քաղաքական կոալիցիային համագործակցությունը դադարեցնելու առաջարկով»,- հայտարարեց Ա. Ռուստամյանը: Կոալիցիոն համագործակցությունը դադարեցնելու երեք ձեռք կա. առաջին՝ եթե կան անհաղթահարելի տարաձայնություններ, երկրորդ՝ եթե լինի համաձայնագիրը դադարեցնելու մասին միակողմանի հայտարարություն, երրորդ՝ համագործակցությունը դադարեցվի կողմերի համաձայնությամբ: «Մենք գնացել ենք երրորդ ճանապարհով՝ կողմերի համաձայնությամբ»,- ասաց Ա. Ռուստամյանը: Դաշնակցությունը չի անում այնպիսի քայլ, որը դիտվի որպես ընդդեմ մեկի, կամ ի շահ մյուսի:

«Ահա այս ելակետից ելնելով է, որ մենք փորձում ենք ոչ թե միակողմանի քայլեր կատարել, այլ գտնել այդ քայլերի կատարման քաղաքակիրթ եղանակը: Մենք հայտարարում ենք մեր ժողովրդին, որ պատրաստ են հրաժարվել զբաղեցրած պաշտոններից: Մենք այստեղ որեւէ խնդիր չենք տեսնում՝ հասկանալով, որ նախընտրական շրջանում մեր հարաբերությունները կոալիցիոն գործընկերների հետ կրել են մրցակցային բնույթ, բնականաբար, քաղաքական էթիկան պահանջում է, որ մենք այս քայլը կատարենք: Բնականաբար, մենք սպասելու ենք կոալիցիայի արձագանքին»,- ասաց Ա. Ռուստամյանը:

Մյուս հարցը վերաբերում է հետընտրական իրավիճակի հաղթահարմանը: «Մենք երկու կողմերին այսօր կոչ ենք անում ձեռնպահ մնալ այնպիսի քայլերից, որոնք կարող են այսօր ավելի սրել իրավիճակը: Մի կողմին հորդորում ենք, որ իշխանությունը բռնի ուժով փոխելու որեւէ ծրագիր չփորձի իրականացնել, մյուս կողմին էլ հորդորում ենք հարգել այն մարդկանց տեսակետը, ովքեր իսկապես հիմքեր ունեն եւ կարող են դժգոհել ընտրությունների արդյունքներից»,- ասաց Ա. Ռուստամյանը՝ նկատելով, որ նման իրավիճակներից դուրս գալու ձեռք իրական բազմակարծություն է ժողովրդավարական արժեքներն ապահովելն է: Նա կարելուրեց ընդդիմության դերի հստակեցումը մեր երկրում, նաեւ, որ նոր կառավարությունը ձեւավորվի այնպես, որ հաշվի առնի այս բոլոր խնդիրները եւ ուղիներ գտնի դրանք լուծելու համար:

Դաշնակցության ներկայացուցիչները մեկ անգամ եւս հայտարարեցին, որ պատրաստ են ամենաակտիվ միջնորդական ջանքերն իրականացնել եւ փորձել քաղաքական լուծումներ գտնել:

Վահան Հովհաննեսյանն էլ ասաց, որ ինչպես բոլոր ընտրությունների ժամանակ, այս անգամ էլ մի քանի ընտրատարածքներում կատարվածը խայտառակեց ընտրությունը, եւ իշխանությունը պետք է իրական քայլեր ձեռնարկի դրանք վերացնելու ուղղությամբ: Նա նշեց, որ այսօր փորձում են վերլուծել, թե ինչու այսպես եղավ, սակայն ոչ մի տրամաբանություն չի գործում այնտեղ, որտեղ փող են բաժանում. Ժողովրդի քաղաքական կամքի եւ քվեատուփի միջեւ գտնվում է մի գործոն, որը խզում է դրանց կապը: Նրա խոսքերով՝ ընտրակաշառքը համատարած բնույթ է ունեցել: Նա հայտարարեց, որ պետք է փոխել քվեարկության պայմանները, եւ առաջիկայում դա է լինելու Դաշնակցության խնդիրը

Watch the Video

http://www.yerkirtv.org/news/video.php?lang=arm&page=1&id=6841&fid=6841_20080226.18arm.wmv